ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«16 » դեկտեմբերի 2020 թվականի № 37

## ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16 -Ի ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 - րդ հոդվածի 6- րդ պարբերության պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 11 նիստի օրակարգը՝

1. Արգավանդ համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Համայնքապետարանի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տարեվերջյան գույքագրման արդյունքների մասին:
3. Վարձակալած հողատարածքները ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին:

Ավագանու անդամներ կողմ (4) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«16» դեկտեմբեր 2020 թվականի № 38-Ն

## ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18- րդ հոդվածի 1- ին մասի 18- րդ կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9- րդ, 10- րդ , 11- րդ ,12- րդ , 13 – րդ , 14- րդ հոդվածների պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արգավանդ համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի տեսակները և հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝. համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,

բ. սույն կետի 1- ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000/ տասնհինգ հազար/ ՀՀ դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000/ քսանհինգ հազար/ ՀՀ դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000/քսանհինգ հազար/ ՀՀ դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝50000/ հիսուն  հազար / ՀՀ դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 /հազար հինգ հարյուր / ՀՀ  դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500/ երկու հազար հինգ հարյուր  / ՀՀ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 / հազար հինգ հարյուր  / ՀՀ դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետի սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1- ին ենթակետով  սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500/ երկու հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000/ հարյուր հազար / ՀՀ դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000/ երեսուն հազար /ՀՀ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝25000/քսանհինգ հազար / ՀՀ դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5250 հինգ հազա երկու հարյուր հիսուն / ՀՀ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 /յոթ հազար / ՀՀ դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 /տասնմեկ հազար/ ՀՀ դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 /տասներեք հազար/ ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 /քսաներեք հազար/ՀՀ դրամ.

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝5250 /հինգ հազար երկու հարյուր հիսուն/ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000/յոթ հազար/ ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000/ տասնմեկ հազար/ ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝13000/ տասներեք հազար/ՀՀ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 /քսաներեք հազար/ ՀՀ դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 175/ հարյուր յոթանասուն հինգ / ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000/քսանհինգ հազար / ՀՀ դրամ,

բ.հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100 000/հարյուր հազար/ ՀՀ դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 100 000/ հարյուր հազար / ՀՀ դրամ,

դ. խաղատների համար՝250 000/երկու հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 150 000/ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ,

զ. վիճակախաղերի համար՝75 000/յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500/ երկու հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000/ չորս հազար / ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000/վեց հազար / ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **8000**/ ութ հազար / ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000/ տասնմեկ հազար / ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000/ տասնվեց հազար / ՀՀ դրամ.

բ.ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500/ հինգ հարյուր / ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 /հազար / ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500/ **հազար հինգ հարյուր** / ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000/ երեք հազար / ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000/ութ հազար / ՀՀ դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝1000 /հազար / ՀՀ դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750/հազար յոթ հարյուր հիսուն / ՀՀ դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո ՀՀ դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750/յոթհարյուրհիսուն / ՀՀ դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 188 /հարյուր ութանասունութ / ՀՀ դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի՝ 75 / յոթանասունհինգ / ՀՀ դրամ.

12) Հայաստանի Հանրապետության Արգավանդ համայնքի անվանումը, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան,ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000/ հիսուն հազար / ՀՀ դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 /հինգ հազար / ՀՀ դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ .

15) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար 50000 / հիսուն հազար / ՀՀ դրամ.

16) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 10 000 / տասը հազար/ՀՀ դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 50000/ հիսուն հազար / ՀՀ դրամ:

2. Սույնորոշման 1- ին կետով սահմանված դրույքաչափերի համար կիրառվել է ՝ 0.5 գործակիցը:

3. Հայաստանի Հանրապետության ԱրարատիմարզիԱզատաշենհամայնքում սահմանել2020թվականի տեղական վճարների տեսակները և հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարսահմանել 5000 / հինգ հազար / ՀՀ դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 / հինգ հազար / ՀՀ դրամ .

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000/ հինգ հազար / ՀՀ դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 30000 /երեսունհազար / ՀՀ դրամ .

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար

6)Համայնքի ,,ԱՆԱՀԻՏ,, մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանել ամսեկան ծնողական վճար յուրաքանչյուր երեխայի համար- 7000/ յոթ հազար/ ՀՀ դրամ

ա. Մանկապարտեզի ծնողական վճարից ազատել ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

7) Համայնքի Ա.Սայանի անվան երաժշտական դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանել ամսեկան վճար

Համայնքում հաշվառում ունեցող մեկ երեխայի համար

ա. Լարային, դաշնամուրի և ակորդեոնի բաժին – 3500 /երեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

բ. Վոկալ բաժին – 3200 ՀՀ դրամ:

Համայնքում հաշվառում չունեցող մեկ երեխայի համար՝

ա. Լարային, դաշնամուրի և ակորդեոնի բաժին – 4500/ չորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

բ. Վոկալ բաժին - 4000 չորս հազար/ ՀՀ դրամ:

Երաժշտական դպրոցի վճարից զեղչել

ա . ծնողազուրկ

բ. միակողմանի ծնողազուրկ

գ . սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

8) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000/ երեք հազար / ՀՀ դրամ.

9) համայնքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար , յուրաքանչյուր ամիս սահմանել վճար

ա .կենցաղային աղբի համար , ըստ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար '100 / հարյուր / ՀՀ դրամ

բ. ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով՝

- առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 /հիսուն/ ՀՀ դրամ.

- հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20/ քսան / ՀՀ դրամ.

- վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 / տասնհինգ /դրամ.

- գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3/ երեք / ՀՀ դրամ, .

- արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5/հինգ/ ՀՀ դրամ.

բ1. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50/ հիսուն / ՀՀ դրամ:

գ. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչբնակելի տարածքների վերաբերյալ սույն որոշման 7 -րդ ենթակետի բ պարբերության1

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝3000/ երեք հազար/ ՀՀ դրամ, կամ

- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000/ տասը հազար /ՀՀ դրամ.

10)համայնք իարխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝փոխհատուցման վճար սահմանել 500/ հինգ հարյուր /ՀՀ դրամ .
10)համայն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝սահմանել՝

ա.կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն 500/հինգ հարյուր/ ՀՀդրամ:
բ. Ծննդօգնություն թեթև միջամտության դեպքում 1000 /հազար / ՀՀ դրամ.ծանր միջամտության դեպքում 5000 / հինգ հազար / ՀՀդրամ ,
գ.վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների մունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում բացառությամբ՝

<<Գյուղատնտեսական կեդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների մանր եղջերավոր անասունների համար 100 / հարյուր / ՀՀ դրամ , խոշոր եղջերավոր անասունների համար 200/երկու հարյուր/ ՀՀ դրամ
դ.կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար՝ 200/ երկու հարյուր/ ՀՀդրամ.
ե. ախտահանության 1 քառակուսի մետրի համար 200 / երկու հարյուր / ՀՀդրամ
զ. միջատազերծում ( դեզինսեկցիա )՝1 քառակուսի մետրի համար՝100 / հարյուր / ՀՀ դրամ.

է. կրծողների [illegible]

ը. արհեստական սերմնավորման համար՝ 5000 / հինգ հազար / ՀՀդրամ
թ. Կենդանու հերձում մանր եղերավոր անասունների համար ՝1000/ հազար / դրամ , խոշոր եղջերավոր անասունների համար՝ 3000/ երեք հազար / ՀՀդրամ .
ժ.կենդանու բուժում յուրաքանչյուր այցելությունը մանր եղջերավոր անասունների համար 1000 / հազար / ՀՀ դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 2000 / երկու հազար/ ՀՀդրամ ,
ի. Կենդանիների նախասպանդային զննում մանր եղջերավոր անասունների համար 1000 / հազար / ՀՀ դրամ , խոշոր եղջերավոր 2000 / երկու հազար /ՀՀ դրամ :

Ավագանու անդամներ կողմ (4) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«16» դեկտեմբեր 2020 թվականի № 39

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի32-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գույքագրման հանձնաժողովի կողմից կազմված ակտի համաձայն հաստատել Արարատի մարզի Արգավանդ համայնքի սեփականության 2020 թվականի փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ կողմ (4) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«16 » դեկտեմբերի 2020 թվականի № 40

## ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, Հայաստանի Հանարապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի ,66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով վարձակալների դիմումը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վարձակալ Հայկ Գևորգյանի վարձակալած 0.05 հեկտար , ծածկ./03-018-0061-0030/ գյուղատնտեսական նշանակության հողամասը /վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 224.000 ՀՀ դրամով օտարել Հայկ Գևորգյանին:
2. Վարձակալ Հայկ Գևորգյանի վարձակալած 0.05 հեկտար , ծածկ. /03-018-0061-0029/ գյուղատնտեսական նշանակության հողամասը / վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 224.000 ՀՀ դրամով օտարել Հայկ Գևորգյանին:

3. Վարձակալ Կարմեն Գրիգորյանի վարձակալած 0.05 հեկտար , ծածկ./ 03-018-0061-0028/ գյուղատնտեսական նշանակության հողամասը / վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 224.000 ՀՀ դրամով օտարել Կարմեն Գրիգորյանին :
4. Վարձակալ Կարմեն Գրիգորյանի վարձակալած 0.05 հեկտար , ծածկ03-018-0061-0027/ գյուղատնտեսական նշանակության հողամասը / վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 224.000 ՀՀ դրամով օտարել Կարմեն Գրիգորյանին:
5. Վարձակալ Անուշ Գրիգորյանի վարձակալած 0.05 հեկտար , ծածկ./ 03-018-0061-0026/ գյուղատնտեսական նշանակության հողամասը /այլ հողատարածք/ ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 224.000 ՀՀ դրամով օտարել Անուշ Գրիգորյանին:
6. Վարձակալ Մարետա Գրիգորյանի վարձակալած 0.05 հեկտար , ծածկ./ 03-018-0061-0024/ գյուղատնտեսական նշանակության հողամասը / վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 224.000 ՀՀ դրամով օտարել Մարետա Գրիգորյանին:
7. Վարձակալ Վիգեն Սարգսյանի վարձակալած 0.056 հեկտար , ծածկ./ 03-018-0061-0023/ գյուղատնտեսական նշանակության հողամասը / վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 250.880 ՀՀ դրամով օտարել Վիգեն Սարգսյանին:
8. Վարձակալ Արթուր Նորայրի Սարգսյանի վարձակալած 0.05 հեկտար , ծածկ./ 03-018-0061-0022/ գյուղատնտեսական նշանակության հողամասը / վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 224.000 ՀՀ դրամով օտարել Արթուր Նորայրի Սարգսյանին:
9. Վարձակալ Հրանտ Գևորգյանի վարձակալած 0.05 հեկտար , ծածկ./ 03-018-0061-0006/ գյուղատնտեսական նշանակության հողամասը / վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 224.000 ՀՀ դրամով օտարել Հրանտ Գևորգյանին:
10. Վարձակալ Պապիկ Վարդանյանի վարձակալած 0.05 հեկտար , ծածկ./ 03-018-0061-0013/ գյուղատնտեսական նշանակության հողամասը / վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 224.000 ՀՀ դրամով օտարել

11. Վարձակալ Վարդան Սահակյանի վարձակալած 0.05 հեկտար , ծածկ./- 03-018-0061-0014/ գյուղատնտեսական նշանակության հողամասը / վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 224.000 ՀՀ դրամով օտարել Վարդան Սահակյանին:
12. Վարձակալ Մելիք Ավագյանի վարձակալած 0.064 հեկտար , ծածկ./- 03-018-0061-0018/ գյուղատնտեսական նշանակության հողամասը / վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 286.720 ՀՀ դրամով օտարել Մելիք Ավագյանին:
13. Վարձակալ Էվելինա Ոսկանյանի վարձակալած 0.05 հեկտար , ծածկ./ 03-018-0061-0019/ գյուղատնտեսական նշանակության հողամասը / վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 224.000 ՀՀ դրամով օտարել Էվելինա Ոսկանյանին:
14. Վարձակալ Նարինե Թովմասյանի վարձակալած 0.05 հեկտար , ծածկ./ 03-018-0061-0020/ գյուղատնտեսական նշանակության հողամասը / վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 224.000 ՀՀ դրամով օտարել Նարինե Թովմասյանին :
15. Վարձակալ Աշոտ Առաքելյանի վարձակալած 0.05 հեկտար , ծածկ./ 03-018-0061-0021/ գյուղատնտեսական նշանակության հողամասը / վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 224.000 ՀՀ դրամով օտարել Աշոտ Առաքելյանին:
16. Վարձակալ Արթուր Մանվելի Սարգսյանի Վարձակալ վարձակալած 0.9 հեկտար , ծածկ. / 03-018-0061-0008/ գյուղատնտեսական նշանակության հողամասը /վարելահող / ուղղակի վաճառքի կարգով կադաստրային լրիվ արժեքով՝ 4.032.000 ՀՀ դրամով օտարել Արթուր Մանվելի Սարգսյանին:

Ավագանու անդամներ կողմ (4) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ